

ԴԵՄՈՒՆՏԱՆԵՐԻ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԻՒՆԸ

ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒ- ԹԵԱՆՆ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՅՈՎ. ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅԻ

(Շարունակութիւն 1)

2. Ծամբորդական նկարագրութիւններ:

Գիտական գրեւծքների շարքում շատ ենք նաև ճամբորդական նկարագրութիւնը, որ աւելի զրաւիչ կերպով՝ քան աշխարհագրական ձեռնարկը՝ մեզ ներկայացնում է երկիրն ու նրա վրայ պատահած երևույթները: Ուղևորի շարժուն շրջութիւնը, նրա շփուլի իրերի և երևույթների փոփոխութիւնը, համեմատութիւնը, նորութիւնն և այն պարզ կամ մանաւանդ վիպական ձևով աւելի զրաւում են: Աշխարհագրութեանն աւելի մօտ է, ի հարկէ, առաջին պեսակը, իսկ հրկրորդի ներկայացուցիչները մեծ մասով շահագիտական նպատակով ծայրայեղութեանց հասցրած՝ կուպէրի օրինակելի գրեւծքների այլանդակութիւնն են ներկայացնում: Այդ աստիճանագրութիւն հեղինակները ձգտում են շեռահասների վառ երևակայութեանը որքան կարելի է աւելի զրգռիչ նիւթեր պալ: Ի՞նչ կ'լինի հեպեանքը: Այդպիսի ընթերցողներն ապա անյազութեամբ ձեռք կ'առնեն վրանգաւոր վէպերն ու ոտով գլխով կը թաթախեն նրանց մէջ: Պատմաճքների հեղինակը պէտք է բանաստեղծական նուրբ ճաշակ ունենայ և գեղանկար պատկերներով հրապուրելու կա-

1) Տես «Մուրճ» № 2—3:

րոշուած ինչն: Բայց ով որ զուրկ է այդ ձիրքերից, նա հարկադրուած կը լինի հետաքրքրութիւն շարժելու համար անթույլատրելի միջոցների շիմելու:

Ձուտ ճամբորդական նկարագրութիւններն այնպէս կենդանի պէտք է լինին, որ ընթերցողը, որքոն կարելի է, աւելի հնարաւորութիւն ունենայ երևակայութեամբ այդ հեռաւոր երկիրները փոխադրելու. կամ պէտք է որ գոնէ նրան այնպէս թւար, թէ հեղինակն ինքը այդ ամենին ականատես է եղել: Երկրի բնական ու ազգագրական երևույթները պէտք է իրերի պատճառականութեանը վերագրել, այս կամ այն պարօրինակ կամ ծիծաղելի թւացող երևույթը նոյն աշխարհի պատմութեամբ բացատրել և ոչ ծաշր ու ծանակի առարկայ շարձնել: Որքան աւելի մանրամասն նկարագրելի որ և է երկրի բնութիւնը, այնքան աւելի փպաւորութիւն կը գործէ նա, մանաւանդ երբ աչքի ընկնող փարբերը վեր առնելով՝ համեմատում են հայրենականի հետ: Այն ժամանակ շատագրքերի հաստատարիչ (սփերէտփիս) շարձածներից հետո կը մնար այդ նկարագրութիւնը, քարտէսի նշաններն էլ կենդանութիւն կը ստանային: Ահա այնպէս կարելի էր հարցասիրութիւն առաջացնել շէպի հայրենի ու հեռաւոր աշխարհները:

Աշխարհագրութեան վերաբերեալ գրականութիւնը Կամպելից ու Ջայլցմանից սկսեալ անսահման ծաւալ է ընդունել: Իբրև լաւագոյն հեղինակներ յայտնի են Կարլ Միւլլեր, Բիռնացկի, Ֆալկնհորստ, Բրուզը-փաշա, Գուստաւ Նախտիզալ, Ստէնլէյ:

Մեզանում ճամբորդական նկարագրութիւններ հրատարակել են Վիեննայի Վագենաշարան կրթական և զբօսալի տեսարակաց խմբում 1849-60 թ.: Ք. Կոլումբոսը կամ Սմերիկայի գիւլը 1880 թ. երկրորդ փպագրութեամբ լոյս տեսաւ «Հայկական մատենագիտութեան» մէջ նշանակած են 14 օրինակ, մեծ մասով հայերից գրած հայրենի երկրի մասին: Դեռ չեմ կարդացել Միրզա-Աւագեանի «Ստէնլի, նրա կեանքը, գիւտերը և վերջին ճանապարհորդութիւնը» թարգմ. (?), Բագում մեր բարբառով հրատարակածը: Եթէ ձեռքս ընկնի, կը ցուցակագրեմ:

Վիպական ձևով բացի Ռոբինզոնադներից մեր բարբառով լոյս են տեսել «Երկու բարեկամ» Ս. Շուպիայի և Մաքս Ռոզընհայնի «Նա-

ւի փոքրաւորը, թարգմ. Յ. Լալայեանցի, Վերջինիս նպատակն է անհնազանդ որչու շտաբայ օրինակով խրատել հասակակիցներին ու նաև Յէյրոն կղզին ծանօթացնել: Փոքրիկ հերոս Ջոնն ուր որ ուր է շնու՛մ, իր մեծ արխարութիւնը յերևան հանելու համար արտաքոյ կարգի արկածների է հանդիպում: Նա մի քանի անգամ խեղդողներ է աղարում և ամեն քայլափոխում սարսափելի կենդանիների է հանդիպում: Եոզեշարժի արագութեամբ ներկայացրած այս արկածալի կեանքը, կարծում ենք, առանձին մնացուն հեղքեր չի կարող թողնել: Թարգմանութիւնը ճոխ ու ընտիր է, բայց ի նկատի ունեւած ընթերցողների համար՝ ծանր: Եռակիսյինը ոչ կարարեալ ռարոյալէպ է և ոչ էլ բանաստեղծական ողբով դրւած ճամբորդական նկարագրութիւն:

Մեր շեռահասների ինքնուրոյն դրականութեան մէջ իր տեսակում միակն է Ի. Յարութիւնեանցի առաջնորդութեամբ 1894 և 95 թ.ականներում ճնդրսիսեան շարոցի սաների ճանապարհորդութիւնը: Ափսոս որ այս գեղեցիկ ու խորհրդաւոր գործն ընդհատուց ու հետևողներ էլ չունեցաւ, թէև, օրինակ, Գէորգեան ձեմարանի սաները յաճախ ճամբորդութիւն են անում հայրենի պարմական վայրերում: Եւ որքան քիչ ենք ճանաչում մենք մեր փոքրիկ հայրենի աշխարհն ու նրա ժողովրդի վարք ու բարքը, նիստ ու կացը, սովորութիւնները... Երբ այս մասին հարցասէր եւրոպացին ու ամերիկացին հարց ու փորձ է անում հայ ուսանողներին, օտարականի ներկայութեանը, մէկի ասածը միւսը մեղմով է հերքում, իրար Վիէշ են քաշում: Իսկ երբ որ ով զիտէ ինչ եզրակացութեան եկած հարցը հեռանում է, միայն այն ժամանակ պէտք է շուք տեսնէք որք վիճաբանութիւնը:

Դ. ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԳՐԻԱԾՔՆԵՐ

1. Ուսանաւորների ու երգերի ժողովածուներ: Մանկական բանաստեղծութիւններ գրողներ համաշխարհային գրականութեան մէջ շար են եղել, բայց ընտրեալները՝ հազւագիւտ: Ի հարկ է, նոյն ընթացքի մէջ պէտք է գտնուած լինէր նաև մերը, որ իր սահմանափակ վիճակով, բնականաբար, աւելի էլ աննշան արդիւնք առաջացրած պէտք է լինէր: Մանկական անկոչ բանաստեղծները

արժուժում են, թէ կոչուժմ անելով շեռահասաների բարոյական զգացումներին, բնութեան ու արինգերքի սքանչելիքները նկարագրելով, նրա խորհուրդները բացատրել նկարելով, մահւան ու կեանքի իմաստը իբր թէ պարզելով՝ կարող են մանկան սրտին մօտենալ, նրանում արել բռնել: Այլ, այդ ընտրած շարժիչներից (մտոր) շարտերը հեռու են մանկական աշխարհից, ուստի և նրան ոչ սիրելի: Մանկանը շարտ անգամ աւելի բառախաղն է զբարեցնում՝ քան իմաստը, աւելի բանաստեղծութեան երաժշտական տարրը՝ քան բովանդակութիւնը: Նրան հմայում է կարծիլի ու սիրուն, թեթե ու գողտրիկ ոտանաւորը՝ համեմած չարածճի շարժեածներով, որոնց հետ կապուած է լինում նրա սիրտը, ուստի և նա նրանց անգիր է անում, երգում, նրանցից անբաժան մնում: Թէ որքան երկրորդական բան է շեռահասի համար բովանդակութիւնը, այդ վկայում է Քէօթէյի փորձառու զրիչը, որ իր «Ճշմարտութիւնն ու Բանաստեղծութիւնն իմ կեանքից» երկի մէջ առաջարկում է նախ «Ողիտականի» և «Իլիականի» արձակը տալ նրանց, որպէս զի չափական ձեւերով չչտիշտակելով՝ նրանք բովանդակութեանը ուշք ու միտք շարձեն, մի կարևոր առաջարկութիւն, որին կը շարունակք փոխադրութեանը վերաբերեալ գլխում:

Մանկական բանաստեղծութիւններին վերաբերեալ էական կէտերը Քէօցէի ¹⁾ ընդարձակ յօդուածից քաղելով ահա մէջ բերեմ, որպէս զի այս խնդրով հետաքրքրուողները տեսնեն, թէ մանկական անւանեալներից որքանը կարող է համապատասխանել այդ պահանջներին: «Ժողովրդական բանաստեղծութիւնն ու մանուկը» յօդուածի հեղինակի մանրագննին վերլուծութիւնից, որ պարզուած է բազմաթիւ կեղծ ու իսկական օրինակներով, առանձին ուշադրութեան արժանի եմ համարել հետեւեալ կէտերը:

ա. Մանկութեան իւրացուցման ձեւը երեւակայութիւնն է:

բ. Ոչ թէ արեւտրական, այլ ժողովրդի շեռահաս կեանքի բանաստեղծութիւնն է հարկաւոր:

գ. Մանուկն ու նախնական ժողովուրդը շրջապատող բոլոր առարկաներն ըմբռնում են իբրև շնչաւոր:

¹⁾ Աշխարհի մանրամասնութիւնները կը լիչեն մի ալ անգամ:

Դ. Մանուկն իսկական բանաստեղծութիւն ըմբռնելու շեռ կարողութիւն չունի. նա փակաւին կանգնած է լինում ըմբռնողութեան էթիկական աստիճանի վրայ, և նրա համար շեռ այն ժամանակը չէ հասել, երբ ուշալական իրականութեան և իշխալական գեղեցկութեան ճանապարհները անջափ են երևում:

Ե. Մանկական երգերը ժողովուրդն է բանաստեղծել մանկան համար:

Զ. Մանուկները ոչ թէ ուսողական (շիշակփիկական) բովանդակութեամբ հնարովի նիւթեր են պահանջում, այլ նիւթական (sinnliche) կենդանապատումներ:

Է. Ժողովրդական երգերը հնարում չեն, այլ յերևան են գալիս իբրև կեանքի արդիւնք¹⁾: Այդ իսկապէս շիպածական բանաստեղծութիւններ են, այս պատճառով է որ նրանք կցկտուր են, և հէնց այդ էլ աւելի սիրելի է մանուկներին: Նրանք բանահիւսուում են մանկան հեփ ու նրա կեանքից:

Ը. Ժողովրդական բանաստեղծութիւնն էլ ճանաչում է անհար բանաստեղծներ... բայց նրանց երգն իր ճաշակովն է կերպարանափոխում:

Թ. Խօսելի են այն երգերը, որոնք կրօնական վերացական գաղափարներ, բնութեան ու գեղեցկութեան վերաբերեալ յորդառապողգոցումներ ու մանուկների անմեղութեան վերաբերեալ մտքեր են արտայայտում:

Ժ. Ժողովրդական բանաստեղծութիւնը փոխանակ բնութեան կեանքը նկարագրելու՝ նոյն իսկ կեանքն է փալիս:

Ժա. Ժողովրդական բանաստեղծութիւնը համամարդկային բովանդակութիւնը ազգային ձևի է վերածում, մինչդեռ արևեստական բանաստեղծութիւնը կանգնած է լինում կոսմոպոլիտական աշխարհայեցողութեան բարձրութեան վրայ:

Ինչպէս փեսանք, մանկական բանաստեղծութիւնը հէքիաթի պէս ժողովրդի նախնական կեանքի շրջանի հեփ կապ ունի. այդ բանահիւսութիւնը հէքիաթի ու առակի հիմքը պէտք է համարել:

¹⁾ Գերմանացին erleben բառն է դորձածում, որ նոյնպէս կարելի է բացատրել՝ իբրև կեանքի շիպածների հեփանք:

Առակը ձևով մէկին է նման, իսկ բովանդակութեամբ միևսին: Հէքիաթից յետոյ ընթերցանութեան շարմարագոյն նիւթերից մէկն է առակը, որ նրա պէս իբրև ազար ընթերցանութեան նիւթ՝ շարհակառակորդներ է ունեցել, որոնք այդ բանահիւսութիւնը նրան յատուկ հակիրճ ոճի ու բարոյախօսական միտումի պատճառով մանկանը անհասկանալի են համարել: Բայց այս փոքրիկ մարդն էլ իւրացուցման իր սեպհական կերպն ու ոյժն ուի. նա շար լաւ ըմբռնում է կենդանիների փոխադարձ շարաբերութիւնները և նրանքիչ բան անջքան հրճանք կը պատճառի, որքան այդ վերին աստիճանի ունիւնք, աչքի ընկնող հակապարկերները, որոնք հէնց այս առանձնայարկութեան շնորհով էլ հոգեբանական առանձին արժէք ունին՝ իբրև աւելի փպււտորիչ պարկերներ:

Յայտնի է, որ առակախօսների հայրը Եզոպոսն է, և նրա արժանաւոր ու օրինակելի յաջորդներից աւելի յայտնիներն են Լաֆոնտէնն ու Վոլտովը, որի շահական թարգմանիչը հայ գրականութիւնն ունեցել է յանձին ճարտարարեստի Այվազովսկու: Մեզանում, ինչպէս երևում է, օրինակ, «Ազգագրական հանդէսի» մի փոքրիկ ժողովածուից, ժողովրդական անգիր բանահիւսութեան մէջ հարուստ նիւթեր կան ոչ թէ իսկական առակների, այլ կենդանապատկան վէպերի, որոնք կարօյր են խելացի բանահաւաքի և շնորհալի հումորիստ բանահիւսի ¹⁾: Այդ հում նիւթերի հաւաքումն ու գրումը ժամանակին թերևս ցոյց տան, որ իսկական առակների նիւթեր էլ լինին նրանց մէջ: Առայժմ այդպիսի նշոյլներ չերևան գալիս են:

Գերմանիայում Հագէդորֆից սկսեալ մինչև Գելլէրտ, Կրուսախէր, շարերը փորձել են առակախօսութիւնը, բայց իսկական առակախօս ու մանկական բանաստեղծը Վ. Հայն է համարում, որի առակները 4—7 տարեկան մանուկների համար են և Շպեկէրի պարկերներով լաւագոյն ժողովածուն են կազմում:

¹⁾ Այդ վէպիկներից մին իմ առաջարկութեամբ մեր երիտասարդ բանաստեղծներից մէկը չափականի վերածեց, բաւականին համով բան շուրս եկաւ Գուրգէ մեծ մասով աշէսի կեանքից առած այդ նիւթերից մի օր մենք էլ մեր «Ռաջնէկէ աշէսը» կազմեմք:

Յրգասացներից ու գեղօնասացներից (բալլադա գրողներ) Շիլլերի և Գեթեի բանաստեղծութիւններից մի քանիսն են մանկական Նոյնը պէտք է ասել նաև այլ դասական ու երկրորդական բանաստեղծների արտադրութեանց վերաբերմամբ: Իսկական մանկական բանաստեղծներ են Ն. Ֆ. Ֆալլերպլէբն, գրա՛՛՛՛ Պոցցի և Հէրման Կլեպկէ: Գեղօնասացներից Գեթեի ու Շիլլերի հետ նշանաւոր են Բիւրգէր, Ուլանդ, Շւար, Լեհաու, Անաստագիուս Գրիւն, Ի. Գ. Չաչլը, Ի. Ն. Ֆորլ և Ա. Կոպիշ: Իսկ լեզենդաներ ու պարաբոլներ գրել են զլխաւորապէս Չերդէր, Կրուճմախէր, Սիմրոկ, Կնապ, Կոզէդարուն: Գէթեին էլ «Պայտն» է գրել:

Մեր գրականութեան մէջ իբրև առաջնակարգ մանկական բանաստեղծ Ալշայեանցն է համարոււմ, որ սակայն զարգացած ընթերցողին էլ բանաստեղծութիւններ է տուել: Նրա «Առ Աւոնդ Ալիշանը», «Փանգաւորը», «Ճախարակը... մանկական չեն: Ով ընդհանրապէս բանաստեղծ չէ, մանկան համար էլ չի կարող գրել, որին սիրելի դառնալն աւելի էլ դժւար է: Ալշայեանցն աւելի հակոււմ ու սէր է ունեցել դէպի մանկական աշխարհը և նրա արձակ բանաստեղծութիւնների լաւագոյններն էլ այս կեանքի հետ են կապուած եղել: Եւ որ նոյն իսկ ընտիր քնարերգուն չի կարող անպարճառ մանկական յաջող բանաստեղծութիւններ գրել, այդ երևոյթին իբրև ապացոյց կարող է ծառայել մեր գրականութեան մէջ էլ Ռ. Պարկանեանը: Նրա «Մանկական ոտանաւորների և երգերի» մէջ խկապէս մի քանի տեսակ բան կայ: Քրքոյլի սկզբոււմ դրւածները, որ ժողովրդի բերանից են առնւած՝ մանկական ու գողտրիկ են, իսկ մնացածները՝ ոչ: Կան և այնպիսիները, որ աւելի սրախօսութիւն, հանելուկ են՝ քան բանաստեղծութիւն: Հեղինակածների վրայ համարեա առանց բացառութեան ծանրանոււմ է խրատական տեղեկեցիան (միտոււմը), որ զրկոււմ է նրանց ախորժալուր ու թեթև բնաւորութիւնից: Մի երկուսն էլ աւելի հասակաւորին վերաբերեալ բովանդակութիւն ունեն: Ալշայեանցի «Սրինգ հովականի» թէ՛ ժողովուրդի բերանից և թէ՛ հեղինակած երգերն ու ոտանաւորները մանկականի ձև ու բովանդակութիւն ունեն: Նա իր հեղինակածները շատ անգամ այնքան մտքեցնոււմ է ժողովրդական արտադրութիւններին, որ կարծես թէ սահմաններն այլևս որոշ չես նշմարոււմ:

Գրականութեան այս ճիւղն էլ աւելի մատչելի անելու համար՝ պէտք էր մանաւանդ Սղայեանցիներ փոքրիկ ու էփանագին ժողովածուներով ընդհանրեցնելու փորձել: Մանկական աշխարհում նրանց հասարակ արմատ արձակելուն շատ կարող էր նպաստել, եթէ պատշաճաւոր եղանակներով էլ ձայնագրէին: Այսպիսի փորձեր արել են Հ. Եզնիկը և Ղ. քահանայ Յովսէփեանը. վերջինս «Քնարիկ մանկական» ժողովածուով: Այս գիրքը, որ փաստ փարի առաջ է հրատարակել, Կովկասում, որքան ինձ յայտնի է, քիչ է փորձուած: Երգերը, պարերգերը և աղօթքները, որ մեծ մասով ծանօթ են, մանկական բանաստեղծութեան պահանջներին հաւասարապէս բաւարարութիւն չեն տալիս. եղանակների ներդաշնակութիւնը կազմել է պ. Մ. Եկմալեանը, որ և կատարել է նրանց սրբագրութիւնը: Եղանակներն առնւած են եղել ժողովուրդի բերանից, այլ աղբիւրներից և մասամբ փոփոխութեան են ենթարկել: Իբրև շինծու և անբնական բանաստեղծութիւնների օրինակ կարող է ծառայել Ս. Դաւթեանի Պոլսում հրատարակած «Մանկական ոգանաւորները», որ անցեալ փարի գրախօսել եմ «Մուրճում»: Արեւմտեան հայերի գրականութեան մէջ, ինչպէս ինքը հեղինակն էլ յայտարարել էր, սա առանձին գրքոյով առաջին անգամ հրատարակուողն էր: Նրանց Դասագրքերում էլ կան շատ մանկական բանաստեղծութիւններ, բայց որքան որ չիշողութեանս մէջ մնացել են, շատ ճոռոմաբանութիւն կայ նրանց մէջ. միայն ժողովրդի բերանից առնւածներն են համովհորով, որոնց նշոյլները Դաւթեանի հրատարակածներից մի երկուսում միայն երևում են ¹⁾: Խօսելով մանկական բանաստեղծութիւնների ժողովածուների վրայ՝ չիշենք որ «Աղբիւրում» մի երկու երկուսարդ բանաստեղծներ յուսարու փորձեր արել են, օրինակ՝ Յովհ. Թումանեան, Գ. Ասուածատրեանց, Մ. Մամիկոնեանց, Զ. Բալուշեան: Այս առիթով նորից կարդացածս երեք փորձերը նրանց համարներում առանձին փառարութիւն գործից եմ վրայ վերջինիս բանաստեղծութիւններից «Մանկական պարերազմը», որ մի փոքրիկ պոէմա է, շարածձի ոգւով, հումորով ու թեթև ոճով գրւած: Փորձի համար վերադին այդքան կարդացածս էլ բաւական էր համոզելու

¹⁾ Մի երկու հատ էլ առել է «Աղբիւր»ից ու մի այլ հեղինակից:

համար, թէ որքան կարևոր էր մի ձեռնհաս յանձնաժողով ընտրել, այս հանդէսի ոչ միայն չափական, այլ և արձակ գրեւծքները զըման ենթարկելով հրատարակելու: Մինչև հիմա միայն մի քանի գրքոյկներ են արտատպուած: Մեր գրականութեան մանաւանդ մանկական ճիւղն այնքան աշքատ է, որ պէտք է, որքան կարելի է, աւելի օգուտ քաղել արդէն արտատպուածներէն ընտիրները նորանոր պայագրութիւններով սերունդէսերունդ անցկացնել:

2. Դրամատրիկական գրեւծքներ: Խօսելով Դեռահասաներին վերաբերեալ բանաստեղծական գրեւծքների մասին՝ լուռութեան տալ չի կարելի թատերական գրականութիւնն ու ներկայացումները: Վերջինիս զանազան նպատակներով մանկական աշխարհում պարմական կեանք ունեցած լինելը և նրա շէմ յարուցած ուժեղ հոսանքն, ի հարկէ, այստեղ չի կարելի խնդրի առարկայ շինել: Բաց քանի որ այս խնդիրը կապ ունի ընթերցանութեան հարցի հետ, հարեանցի չիշտարակելու է: Դրամատրիկական գրեւծքի ձևը, որ գործող անձերի անունները շարունակ մէջ է բերում, տհաճելի է ոչ միայն պարանուն, այլ և զարգացած հասակաւորին: Այդ անունները կարարում են յարուցած մտքերի ու զգացումների հոսանքը: Այլ բան է, ի հարկէ, բեմի վրայ, ուր Դերակատարների ներկայութիւնն ընդհակառակը մեծ հաճոյք է պարծառում, քանի որ երեւակայութեան գործը սաստիկ թեթեւալով՝ թոյլ է տալիս հանդիսատեսներին ներկայացող կեանքում աւելի խորասուզելու: Երբ ընթերցումը շատարանական է, նիւթերն աշակերտների մէջ բաժանելով, աւելի հեշտ է պաւորութիւնը թատերականին մօտեցնել:

Դեռահասաներին հասակաւորների հետ թատրոն փանելը ոչ միայն անպարտակ, այլ և անմիտ բան է, որ կարող է կորստաբեր հետեանքներ ունենալ: Նրանք պէտք է հանդիսատես լինին իրանց շրջանից վեր առած երեւոյթներին և բարձրագոյն շատարանների աշակերտներին, որոնք ըստ ծրագրի անցնում են շատական պարմական Դրամաները, անհրաժեշտ է յաճախել այս կարգի ներկայացումները: «Jugendchriften-Warte» թերթի անցեալ տարեաց չորրորդ համարը բաւականին մանրամասն փեղկութիւններ է տալիս 8000 աշակերտների կեանքից, որոնք հանդիսատես են եղել «Թէլի», «Մինա Ֆոն Բարնհէլմի» և «Օրլէանի կոյտի» ներկայացումներին:

Ներկայացուցման ընթացքում անհրաժեշտ է հիշատակել, որ 1920-21 թվականներին մասին պեղեկացնում են, որ նրանք բոլորովին չափազանց էին եղել, որ ոչ մի բան նրանց վրայ այնպիսի խոր ու մնացուն պատճառներով չէր եղել ինչպես այս ներկայացուցմանը: Նույն դրամաները, որ այդ աշակերտներն արդեն 2—3 անգամ կարդացած ու վերլուծած էին եղել, ներկայացումից չեպույ շատերը նորից ու նորից 4—5 անգամ կարդացին. ուղղակի իրար ձեռքից լսեցին էին անում գրքերը, ամբողջ հարածներ անգիր էին անում, ներկայացնում: Առաջ ընթերցանութեան ամենեւին սեր չունեցողն անգամ այնուհետև այդ բանին սիրահար էր դառնում... Գերմանիայում հեղհեղի պակասում է Հայլանդի՝ ընդհանրապես ուսումնարանական ներկայացուցման շարժումը՝ խիստ կարծիքին (Միդլի հանրագիրարանում) հեղհեղի թիւը, և փոսական և սյլ ուրիշ առիթներով աշակերտական ու այլ ներկայացուցման պայման սովորութիւնն այժմ հեղհեղի նորից պարածուծում է:

Ե. ՊԱՐԵՐԱԿԱՆ ՀՐԱՍՈՒՄԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռայնի մանկավարժական հանրագիրարանն ի միջի այլոց հեղհեղի է գրում—դեռահասաների պարբերական հանդէսների մասին. ընդ որում չէ վրանդը, երբ այդ պարբերական հրատարակութիւնները մանուկների համար այն լինեն, ինչ որ հասակակորների համար ժամանակակից վիպական հանդէսները, որոնք մարդու միտքը ցրում ու նրան վայրի վերջը ընթացք են պալիս: Ընդհանրապէս մարդիկ շեղակարում են հեղհեղի սկզբունքով. ով որ շատ պայ, մի բան կը պայ: Այսպէս՝ մի պարբերակում շատ անգամ ժողովածու են կազմում հեղհեղի պետական իշխանները. վիպանման ու այլ պատմաճիւղներ, զանազան տեսակ զիտական հարածներ, հանելուկներ ու սրանց հեղ պարտաւորիչ պատարկը և այլն, ամեն բանից մի քիչ, իսկ ամբողջ և ոչ մի բան թէ՛ շրջապատով բաժիններ պալով երևակայութիւնը լարում են ու հիւանդ կերպով գրգռում: Արպէս զի դեռահասաների ընթերցանութիւնը մտքի ու զգացումների վրայ ծանրակշիւ ազդեցութիւն գործել կարողանայ, չպէտք է հարկաւորներից կազմած լինի, այլ նա պէտք է որ ամբողջովին կապակցած մտաւոր զանգուածներ ներկայացնէ... Եթէ դեռահասաների

պարբերական հանդէսները մեր շիտոշութեանց համապատասխան փոփոխութեան ենթարկելու լինէին, այն ժամանակ մենք այլ ևս ոչ մի էական առարկութիւն նրանց նկատմամբ չէինք ունենալ. բայց այս շէպքում էլ նրանք այլ ևս չէին լինիլ սովորական մտքով շեռահասների պարբերական հանդէսներ. նրանք հազիւ թէ շեռահասների գրեածքներից փարբեր բան կը լինէինս:

Հետևաբար մե՛նք ինչ շիրք պէտք է բռնենք մեր միակ մանկական «Աշբիւրի» վերաբերմամբ: Արժէր արդեօք պահպանել նրա գոյութիւնը: Նա մեր մանկական աշխարհում այսպէս թէ այնպէս շարափակելով սուր է նրան անփորձ գրիչների անմարս ու անձաշակ մտւնչի հոս նաև համով ու հոտով խորտիկներ: Այդ հանդէսը անխոչ բանաստեղծների թւում ասպարէզ է բաց արել նաև յուսալի գրիչներին ու խրախուսել է նրանց: Ինչո՞ւ չցանկալ ու չաշխատել, որ նա մեր աղքատիկ գրականութեան մէջ այսուհետև էլ շարափակէ: Բայց պէտք է, որ նա կատարելագործւելով ոչ միայն նախկին բարձրութեանը հասնի, այլ և կեանքի նոր պահանջների հետ շտաջ ընթանայ: Կարևոր և միանգամայն ամենաշիւրին բաներից մէկը, որ խմբագրութիւնն առժամանակ կարող էր անել այդ այն է, որ պէտք է աշխատիլ, որքան հնարաւոր է, խոյս տալ ոչ միայն շափական այլ և արձակ ձևով յօդածները մանրիկ հարւածներով մի քանի համարներում փոփոխելուց: «Աշբիւրի» մէջ կան շեռահասների գրականութեան զանազան ճիւղերից ընտիր գոհարներ, որ գրեածքիս շար հարւածներում մատնացոյց արինք: Արժէր, շար արժէր 2 — 5 կուպէկնոց գրքոյկներով քաշել ու հազարներով տարածել:

*
* *

Գեռահասների գրականութեան զանազան ճիւղերից (բացի զուր բելլեփրիստիկային վերաբերեալներից) մեզանում գոյութիւն ունեցող գրեածքներին վերաբերեալ հաւառօք տեղեկագրութիւնս վերջացնելով թէև չեմ ենթադրում, որ նա լիակատար լինի, սակայն կարծում եմ, որ շուրս մնացածները շար չեն լինելու: Նիւթերս ցուցակագրել եմ «Հայկական մատենագիտութիւնից» և Թիֆլիսի Կենտրոնական, Պոլսի Պալենց, Վիեննայի ու Վենետիկի գրավաճառանոց-

ների նորագոյն գրացուցակներինց՝ Սրանցից զայս բաւականին զըր-
 քեր էլ նրանց մէջ չնշանակածներինց են ձեռքս ընկել: Արդէն այս
 տեղեկութիւններինց՝ բելլեպրիտական սուրազոյն ճիւղը զանց
 առած երևում է, որ Կենսորոնական գրավածառանոցը նոյն իսկ
 արևելեաններիս հրատարակածները լիովին չի ամփոփում: Բայց
 նրա գրացուցակում միշտ յայտարարում է ի միջի այլոց նաև հե-
 տեաւը... ամփոփած լինելով ամբողջ Ռուսահայոց, Երուսաղէմի
 Ս. Յակովբեանց վանքի, Վենետիկի ու Վիեննայի և մասամբ Կ. Պոլ-
 սի հայ հրատարակութիւնները, միջոց ունի լիակատար բաւակա-
 նութիւն գալ...: Գրածքիս վերջում յարելի գրացուցակից կերևայ,
 թէ որքան զրքեր կան, որ համարեա թէ անյայտ են մնացել թէ ի
 փաստ ընթերցողի և թէ թարգմանչի կամ աշխատասիրողի: Որքան
 անկերպարան Դրութեան մէջ է մեզանում նմանաւանդ մասնաւոր
 անձերի ձեռքով հրատարակած զրքերի տարածման գործը: Այս
 կարևորագոյն գործի կազմակերպութեան վերաբերեալ խորհրդածու-
 թիւններս կը ներկայացնեմ իր տեղում:

Գրածքիս վերջում յարելի գրացուցակից կերևայ, թէ որքան զրքեր կան, որ համարեա թէ անյայտ են մնացել թէ ի փաստ ընթերցողի և թէ թարգմանչի կամ աշխատասիրողի: Որքան անկերպարան Դրութեան մէջ է մեզանում նմանաւանդ մասնաւոր անձերի ձեռքով հրատարակած զրքերի տարածման գործը: Այս կարևորագոյն գործի կազմակերպութեան վերաբերեալ խորհրդածութիւններս կը ներկայացնեմ իր տեղում:

Որքան անկերպարան Դրութեան մէջ է մեզանում նմանաւանդ մասնաւոր անձերի ձեռքով հրատարակած զրքերի տարածման գործը: Այս կարևորագոյն գործի կազմակերպութեան վերաբերեալ խորհրդածութիւններս կը ներկայացնեմ իր տեղում: